ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՐԳԱՍԱԲԵՐ ՈՒՂԻՆ

(պրոֆեսոր Է. Ա. Զոհրաբյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրանում է վաստակաշատ պատմաբան, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Արտեմի Զոհրաբյանի ծննդյան 70-ամյակը: Վաստակաշատ գիտնական ու ճանաչված մտավորական Է. Զոհրաբյանի կյանքի տարեգրությունը արգասաբեր ու շնորհաշատ պատմաբանի կենսագրություն է:

Ծնվել է 1939 թ. մայիսի 5-ին Կապանի շրջանի Բաղաբուրջ գյուղում: 1956թ. ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1959-ին՝ Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումը, ապա ծառայել է Խորհրդային բանակում, որից հետո՝ 1962 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Գերազանց առաջադիմության համար ստացել է Հ. Մանանդյանի անվան կրթաթոշակ: 1967 թ. գերազանցության դիպլոմով ավարտելով պատմության ֆակուլտետը՝ ընդունվել է ասպիրանտուրա: 1968 թ. սեպտեմբերից անցել է դասախոսական աշխատանքի ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում՝ զբաղեցնելով նախ ասիստենտի, ապա ավագ դասախոսի (1974), դոցենտի (1978) և պրոֆեսորի (1987) պաշտոններ: 1993 թ. ապրիլին պրոֆեսոր Է. Զոհրաբյանն ընտրվել է նորաստեղծ «Միջազգային հարաբերությունների տեսության և պատմության» ամբիոնի վարիչ (1998 թ. ամբիոնը վերանվանվել է «Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության»): 1998 թ. սեպտեմբերին ստանձնել է նորաստեղծ ֆակուլտետի դեկանի պաշտոնը, որը մեծ հաջողությամբ վարել է մինչև 2008 թ. ապրիլ ամիսը: Մեկ տարուց ավելի է, ինչ նորից ղեկավարում է իր իսկ հիմնադրած ամբիոնը: Գիտահետազոտական ու վերլուծական անվիճելի կարողությունները, արխիվային հարուստ նյութերի իմացությունը, աղբյուրագիտական խոր գիտելիքները նրան ապահովել են գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ:

Պրոֆեսոր Է. Զոհրաբյանի գիտական հետազոտությունների արդյունքները ամփոփված են նրա 60-ից ավելի հոդվածներում և 5 մեծածավալ մենագրություններում: Խոր և բազմակողմանի գիտելիքները, միանգամայն ինքնուրույն դատողությունները, տրամաբանական եզրակացություններ անելու նրա ունակությունները նշանավոր պատմաբանին հնարավորություն են տվել քննվող հարցերին մոտենալու նորովի, նոր հարցադրումներով: Նա հայ դիվանագիտության պատմության ճանաչված մասնագետ է: Հենց քննական և մանրակրկիտ վերլուծական հմուտ կարողությունները գիտնականին հնարավորություն են ընձեռել զբաղվելու հայոց նորագույն շրջանի, հատկապես 1918-1922 թթ. բարդ ու խճճված հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: Այդ ժամանակահատվածի Հայաստանի Հանրապե-

տության, ապա Խորհրդային Հայաստանի միջազգային դրության և արտաքին քաղաքականության շատ հիմնահարցեր լուսաբանվել են լայնախոհ գիտնականի ոչ միայն թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններում, այլև նրա մյուս աշխատություններում ևս: Բազմաթիվ արխիվային նորահայտ փաստաթղթերի վերլուծության շնորհիվ Է. Զոհրաբյանին հաջողվել է շարադրել վերոնշյալ բարդ ու հակասական ժամանակաշրջանի լիակատար պատմությունը՝ բացահայտելով շրջադարձային, բախտորոշ իրադարձություններն ու տալով դրանց գիտական բացատրությունները:

Դեռևս 1979 թ. լույս տեսած «Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ.» իր առաջին մեծածավալ աշխատության մեջ մեր պատմագրության մեջ առաջին անգամ Է. Զոհրաբյանը, համարձակ կերպով ուսումնասիրելով ԽՍՀՄ պայմաններում «փակ» ու չափազանց բարդ համարվող այս թեման, կարողացավ հետազոտել ոչ միայն խորհրդային, այլև նախորդ շրջանի հայ-թուրքական հարաբերությունները, մանրամասն քննելով Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի կոնֆերանսներն ու դրանցում ստորագրված պայմանագրերը, դիվանագիտական այն հսկայական գործունեությունը, որը նախորդել էր այդ կոնֆերանսին:

1980-ական թվականներից Զոհրաբյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում եղել է հայ-իրանական հարաբերությունների և եվրոպական երկրների հետ Հայաստանի առևտրատնտեսական առնչությունների պատմությունը: Նա ընթերցողներին է ներկայացնում երկու կարևոր ուսումնասիրություններ՝ «Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները 1920-1922 թթ.» (1985 թ.) և «Եվրոպական երկրների հետ Հայաստանի առևտրատնտեսական առնչությունների պատմությունից» (1987 թ.): Հեղինակն առաջին անգամ ընթերցողին է ներկայացնում Հայաստանի Առաջին հանրապետության և Իրանի Հանրապետության փոխհարաբերությունները, դեսպան Հ. Արղությանի գործունեությունը, լուսաբանում Խորհրդային Հայաստանի և Իրանի միջև հաստատված քաղաքական և տնտեսական կապերը: Պրոֆեսոր Զոհրաբյանը նաև առաջինն է ուսումնասիրել Իտալիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի և Շվեդիայի հետ Հայաստանի առևտրատնտեսական կապերը:

Գիտական մեծ արժեք է ներկայացնում հեղինակի՝ 1997 թ. հրատարակված «1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները» ուսումնասիրությունը, որում հանգամանորեն բացահայտված են ռազմաքաղաքական նոր իրադրությունը տարածաշրջանում, Հայաստանի միջազգային դրությունը, արտաքին քաղաքականությունը, քեմալա-բոլշևիկյան մերձեցումը, թուրք-հայկական պատերազմի ընթացքը, տերությունների դիրքորոշումն ու վարած քաղաքականությունը և Հայաստանի Հանրապետության պարտության պատճառները: Ցույց տալով քեմալականների՝ Հայաստանի վրա հարձակման դիվանագիտական և ռազմական նախապատրաստությունները, Է. Զոհրաբյանը ցավով արձանագրում է, որ «ինչպես շատ պատերազմներ, այնպես էլ այս պատերազմը Հայաստանը տանուլ էր տվել դիվանագիտության ասպարեզում՝ մինչև նրա սկսվելը»: Այսօր էլ Է. Զոհրաբյանի գիտական հետաքրքրությունների մեջ եղել ու մնում է պատմական Հայաստանի Շարուրի և Նախիջևան գավառների հայաթափության և Հայաստանից անջատման պատմությունը 1918-1921 թթ.: Գիտնական հայագետին հատուկ բարեխղճությամբ ու տեսական խոր վերլուծությամբ պրոֆեսոր Զոհրաբյանը ուսումնասիրեց այդ կարևոր հիմնահարցը և արդեն 2000 թ. հրատարակեց եռամաս մենագրության

առաջինը՝ «Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ.», իսկ 2002 թ.՝ երկրորդ՝ «Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի դաշնակիցները» գրքերը:

Այս արժեքավոր մենագրություններում փաստերի մանրակրկիտ ու հիմնավոր վերլուծությամբ ցույց է տրված Անտանտի տերությունների քաղաքականությունը Նախիջևանի հարցում, ինչպես նաև թուրք-ադրբեջանական ուժերի ագրեսիվ գործողությունները, որի հետևանքով ավարտին հասցվեցին Շարուր-Նախիջևանի և Գողթանի հայության ջարդն ու բռնագաղթը: Համոզիչ փաստարկներով հեղինակն ապացուցում է, որ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցեղասպանություն՝ իր բոլոր դրսևորումներով:

Պրոֆեսոր Է. Զոհրաբյանը գիտության և կրթության հմուտ կազմակերպիչ է: Նրա ղեկավարությամբ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և ամբիոններում մեծ ու արգասաբեր աշխատանք է կատարվել ուսումնական գործընթացի ներդաշնակ կազմակերպման, միջազգային հարաբերությունների և հայ դիվանագիտության պատմության ծրագրերի, ուսումնական պլանների գիտական մշակման և ուսումնական ձեռնարկների ստեղծման ուղղությամբ: Պրոֆեսոր Է. Զոհրաբյանը, 40 տարուց ավելի դասավանդելով Երևանի պետական համալսարանում, անմնացորդ նվիրումով շարունակում է իր գիտելիքները հաղորդել բազմաթիվ ուսանողների, որոնց մի մասը աշխատանքի է անցել Պատմության և Միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում, շատերը՝ Արտաքին գործերի նախարարությունում, դեսպանություններում և այլուր:

Նրա դասախոսություններին բնորոշ են նյութի մատուցման բարձր գիտական մակարդակը և մատչելիությունը: Անուրանալի են պրոֆեսոր Է. Զոհրաբյանի ծառայությունները երիտասարդ գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ, ինչի վկայությունն են նրա ղեկավարությամբ պաշտպանված ու պատրաստվող ատենախոսությունները: Անաչառությունը, ազնվությունը, սկզբունքայնությունը, բարեխղճությունը, պահանջկոտությունը և բարձր պատասխանատվությունը սեփական անձի և շրջապատի նկատմամբ պրոֆեսոր Է. Զոհրաբյանի կենսագրության մշտական բնութագրիչներն են: Նա մի շարք գիտական խորհուրդների անդամ է և գիտական բազմաթիվ զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում: Պրոֆեսոր Է. Զոհրաբյանը, լինելով պատմական ճշմարտության և հարազատ ժողովրդի ազգային շահերի նվիրյալը, երիտասարդական ավյունով ու պատրաստակամությամբ շարունակում է իր գիտամանկավարժական և կազմակերպչական գործունեությունը: Զարմանք է պատճառում պրոֆեսորի աշխատասիրությունը: Լինելով բացառիկ ունակությունների տեր անձնավորություն՝ նա պարզ է, անկեղծ ու բարյացակամ:

Սրտանց շնորհավորելով վաստակաշատ ու մեծանուն գիտնականի ծննդյան 70-ամյա հոբելյանը՝ նրան ցանկանում ենք քաջառողջություն, ընտանեկան երջանկություն և գիտամանկավարժական ստեղծագործական հարատև ու բեղուն գործունություն՝ ի փառս հայագիտության և հայ ժողովրդի:

ՄԻՆԱՍՅԱՆ Է. Գ.
Պատմական գիտությունների դոկտոր